

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 29 ՅՈՒԼԻՍ 2018

Դ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ / ԹԻԲ 69

SUNDAY, July 29, 2018

4th SUNDAY AFTER THE FEAST OF VARTAVAR /

NO. 69

Today's Bible Readings: 1 Timothy 4.12-5.10 /

John 3.13-21 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՍԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Celebrant:

REV. FR. DAVID MARGARYAN

Pastor


Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan,

Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organist: Mr. Karen Manucharyan




615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

Ա. ՏԻՄՈԹԵՈՍ

4.12-5.10

12Ո՛չ մեկը թող արհամարհէ քու երիտասարդութիւնդ, հապա տիպա՛ր եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով ու մաքրակեցութեամբ: **13**Մինչեւ որ գամ՝ ուշադի՛ր եղիր կարդալու, յորդորելու, սորվեցնելու: **14**Անհոգ մի՛ ըլլար քու մէջդ եղած շնորհին հանդէպ, որ մարգարեութեամբ տրուեցաւ քեզի՝ երեցներուն ձեռնադրութեամբ: **15**Խոկա՛ այդ բաներուն մասին եւ զբաղէ՛ ատոնցմով, որպէսզի քու յառաջդիմութիւնդ երեւնայ ամենուն: **16**Ուշադի՛ր եղիր դուն քեզի ու վարդապետութեան, եւ մի՛շտ յարատեւէ ատոնց մէջ. քանի որ այդպէս ընելով՝ պիտի փրկես թէ՛ քեզ, թէ՛ քեզ խողները:

5.1Մի՛ սաստեր տարեցը, հապա յորդորէ՛ զայն՝ հօր մը պէս. երիտասարդները՝ եղբայրներու պէս, **2**տարեց կիները՝ մայրերու պէս, դեռահասակները՝ քոյրերու պէս, բոլորովին մաքրակեցութեամբ: **3**Պատուէ՛ այն այրիները՝ որ ի՛րապէս այրի են: **4**Բայց եթէ այրի մը ունի զաւակներ կամ թոռներ, անոնք թող սորվին նախ իրենց տան մէջ բարեպաշտութիւն ցոյց տալ, ու փոխարէնը հատուցանել իրենց ծնողներուն. որովհետեւ ա՛յդ է բարին եւ ընդունելին Աստուծոյ առջեւ: **5**Իսկ ան որ ի՛րապէս այրի է ու մինակ մնացած, կը յուսայ Աստուծոյ, եւ գիշեր-ցերեկ կը յարատեւէ աղերսանքի ու աղօթքի մէջ. **6**մինչդեռ փափկասեր այրին մեռած է, թէպէտ կ'ապրի: **7**Պատուիրէ՛ այս բաները, որպէսզի անարատ ըլլան: **8**Բայց եթէ մեկը չի հոգար իրենները ու մա՛նաւանդ իր ընտանիքը, ան ուրացած է հաւատքը, եւ աւելի գէշ է՝ քան անհաւատ մը: **9**Իբր այրի թող դասուի ա՛ն՝ որ վաթսուն տարեկանէն կրտսեր չէ, մեկ մարդու կին եղած է, **10**ու բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած է, հիւրեր ընդունած, սուրբերուն ոտքերը լուացած, տառապեալներուն նպաստած, ամեն բարի գործի հետամուտ եղած:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆԵՍԻ

3.13-21

13Ո՛չ մեկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է: **14**Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ,

այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. **15**որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:
16Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը: **17**Քանի որ Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով: **18**Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ա՛ն որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: **19**Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: **20**Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուի իր գործերը: **21**Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծմով»:

1 Timothy 4.12-5.10

11Command and teach these things. **12**Let no one despise you for your youth, but set the believers an example in speech, in conduct, in love, in faith, in purity. **13**Until I come, devote yourself to the public reading of Scripture, to exhortation, to teaching. **14**Do not neglect the gift you have, which was given you by prophecy when the council of elders laid their hands on you. **15**Practice these things, immerse yourself in them,^c so that all may see your progress. **16**Keep a close watch on yourself and on the teaching. Persist in this, for by so doing you will save both yourself and your hearers.

11Command and teach these things. **12**Let no one despise you for your youth, but set the believers an example in speech, in conduct, in love, in faith, in purity. **13**Until I come, devote yourself to the public reading of Scripture, to exhortation, to teaching. **14**Do not neglect the gift you have, which was given you by prophecy when the council of elders laid their hands on you. **15**Practice these things, immerse yourself in them,^c so that all may see your progress. **16**Keep a close watch on yourself and on the teaching. Persist in this, for by so doing you will save both yourself and your hearers.

5.1Do not rebuke an older man but encourage him as you would a father, younger men as brothers, **2**older women as mothers, younger women as sisters, in all purity. **3**Honor widows who are truly widows. **4**But if a widow has children or grandchildren, let them first learn to show godliness to their own household and to make some return to their parents, for this is pleasing in the sight of God. **5**She who is truly a widow, left all alone, has set her hope on God and continues in supplications and prayers night and day, **6**but

she who is self-indulgent is dead even while she lives. **7**Command these things as well, so that they may be without reproach. **8**But if anyone does not provide for his relatives, and especially for members of his household, he has denied the faith and is worse than an unbeliever.

9Let a widow be enrolled if she is not less than sixty years of age, having been the wife of one husband, **10**and having a reputation for good works: if she has brought up children, has shown hospitality, has washed the feet of the saints, has cared for the afflicted, and has devoted herself to every good work.


JOHN 3.13-21

13No one has ascended into heaven except he who descended from heaven, the Son of Man.^g **14**And as Moses lifted up the serpent in the wilderness, so must the Son of Man be lifted up, **15**that whoever believes in him may have eternal life.^h

For God So Loved the World

16“For God so loved the world,ⁱ that he gave his only Son, that whoever believes in him should not perish but have eternal life. **17**For God did not send his Son into the world to condemn the world, but in order that the world might be saved through him. **18**Whoever believes in him is not condemned, but whoever does not believe is condemned already, because he has not believed in the name of the only Son of God. **19**And this is the judgment: the light has come into the world, and people loved the darkness rather than the light because their works were evil. **20**For everyone who does wicked things hates the light and does not come to the light, lest his works should be exposed. **21**But whoever does what is true comes to the light, so that it may be clearly seen that his works have been carried out in God.”





Հովիւի Խօսքը

Պայծառակերպութիւն – Դ Կիրակի Հոգեւոր Մտորումներ



Կ'ողջունեմ ամենքդ Աստուածային Սուրբ սիրով եւ շնորհքով, յարգելի ընթերցասէր «Կանթեղ» թերթիկի, շաբթուայ խօսքս ամենամեծ գովեստին կը վերաբերի:

Մենք՝ ըլլանք հաւաքականութիւն թէ անհատ, կը սիրենք իրար գովել, «ինչ գեղեցիկ հագուստ հագած

ես, ի՛նչ գեղեցիկ ձայն ունիս, ի՛նչ գեղեցիկ կահաւորած ես տունդ: Ու որքան մեզ գովողն ու գնահատողը յարգելի անձ մը ըլլայ, այնքան կը հպարտանանք անոր տուած գովասանքով, «գործատէրս զիս գնահատեց, տնօրէնս ինձի «ապրիս» ըսաւ:

Մեզմէ իւրաքանչիւրը կը սիրէ գովասանուիլ ու կը ցանկայ, որ մարդիկ իր լաւ կողմերը գնահատեն... անկեղծ ըլլայ թէ՛ շողոքորթութիւն:

Մենք, որ իրարու գովեստը կը փնտռենք, արդեօք մեր միտքէն կ'անցնի՞ օր մըն ալ, նաեւ Աստուծոյ գովեստը լսել, Աստուծոյ կողմէ գովասանուիլ: Արդեօք մեզի համար կարեւորութիւն ունի՞, թէ՛ մեր ամենամեծ, ամենակարող եւ անկաշառ Տնօրէնը՝ Աստուած մեր մասին ի՛նչ կը մտածէ, մեզմէ երբեւէ գո՞հ է:

Թերեւս պիտի առարկենք. (Աստուծոյ հաւնածը կամ չհաւնածը մենք ուռկէ՞ գիտնանք, Աստուծոյ ո՛չ տեսած ենք, ոչ՝ ալ ձայնը լսած»: Միանշանակ կերպով կը սխալինք: Աստուած եթէ չենք տեսած, սակայն զինք լսած ենք: Աստուած իր ուզածն ու հաւնածը մեզի փոխանցած է Իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Ուստի եթէ կ'ուզենք անկեղծօրէն տեղեակ ըլլալ Աստուծոյ սիրածին կամ չսիրածին մասին, շատ հեռուները չ'երթանք, այլ Աւետարանը բանալով՝ զայն Յիսուս Քրիստոսին հարցնենք, յատկապէս (Լեռան քարոզ)՝ին մէջ, ուր Հօր Աստուծոյ ուզածն ու չուզածը մեզի յայտնած է: Իր ինը «Երանի»-ները կտակելով մեզի: Անգամ մը եւս յիշենք զանոնք. «Երանի՛ հոգիով աղքատներուն, երանի՛ խաղաղութիւնը սիրողներուն, երանի՛ ողորմածներուն, երանի՛ հոգիով հեգերուն, երանի՛ սգաւորներուն, երանի՛ արդարութեան ծարաւը ունեցողներուն, երանի՛ սրտով մաքուրներուն, երանի՛

արդարութեան համար հալածողներուն: Ապա երանի՛ նաեւ ձեզի երբ Աստուծոյ համար զրպարտուիք ու հալածուիք» (Մատթ. 5.1-11):

Լսեցինք Աստուծոյ փնտռածը, գիտցանք Աստուծոյ ճաշակը: Եթէ զանոնք լաւ չհասկնանք կամ խորհինք, թէ անոնք անգործնական մտքեր են, այն ատեն լսենք, թէ Աստուած մեզի ինչ պիտի ըսէ այս անգամ վերջին դատաստանի օրը, երբ ամենքս իրեն պիտի ներկայանանք:

Այն ատեն պիտի լսենք, ե՞րբ տեսանք քեզ անօթի եւ կերակրեցինք կամ ծարաւի եւ ջուր տուինք, ե՞րբ տեսանք քեզ օտար՝ եւ ներս առինք, կամ մերկ՝ եւ զգեստ տուինք: Ե՞րբ տեսանք քեզ բանտը կամ հիւանդ եւ քեզի այցելելու եկանք: Եւ թագաւորը պիտի պատասխանէ՝ անոնց եւ ըսէ՛, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որովհետեւ այս ամենը փոքրիկ եղբայրներես մեկուն ըրի՛ք, ինծի ըրի՛ք: Այն ատեն պիտի ըսէ ձախակողմեաններուն հեռացէ՛ք ինձմէ, անիծեալներ, գացէք յաւիտենական կրակին մէջ, որ պատրաստուած է սատանային եւ անոր հրեշտակներուն: Որովհետեւ անօթեցայ եւ ինծի ուտելիք չտուիք, ծարաւցայ եւ ինծի ջուր չտուիք, պանդուխտ էի եւ տուն չտուիք զիս, մերկ էի եւ չհագցուցիք, հիւանդ էի եւ բանտին մէջ՝ զիս տեսնելու չեկաք: Այն ատեն անոնք ալ պիտի պատասխանեն ու ըսեն. Ե՞րբ տեսանք ու չհոգացինք: Այն ատեն պիտի պատասխանէ անոնց եւ պիտի ըսէ՛. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որովհետեւ այս բաները չըրիք այս փոքրիկներէն մեկուն, եւ ո՛չ ալ ինծի ըրիք: Եւ անոնք պիտի երթան տանջանքներուն մէջ, իսկ արդարը՝ յաւիտենական կեանքին մէջ» (Մատթ. 25):

Կ'ուզե՞նք Աստուծոյ այս վերջին գովեստին արժանանալ, ուրեմն գործադրենք «Երանի»-ները:

Բայց եկէք անկեղծ հարցում մը ուղղենք մենք մեզի. Աստուած նոյնիսկ փափաքէր մեզ գովել, արդեօք մեր ի՞նչը գովելի պիտի գտներ: Մենք մեր կեանքին ո՞ր մէկ արարքին համար Աստուծոյ գովեստին արժանի ենք:

Եկէք մեր մեղսալից կեանքին անցեալը մոռնանք ու մեր գալիք կեանքի ընթացքին առիթ տանք Աստուծոյ «ապրիք» ըսելու:

«Ապրի՛ք, այս ազնիւ խօսքին համար, Ապրի՛ք սխալ գործէն ձեր հեռու մնալուն համար: Ապրի՛ք փորձութեան մէջ ձեր դիմանալուն համար: Ապրի՛ք գործի մէջ ձեր պարկեշտ վարուելնուդ համար: Ապրի՛ք նեղութեան մէջ գտնուող ընկերոջ մը օգնելնուդ համար: Ապրի՛ք ձեր տուած խոստումին հաւատարիմ մնալնուդ համար, ուրիշը չզրպարտելնուդ ու չնախանձելնուդ համար: Չազա՛ր ապրիք, որովհետեւ ձեր կեանքին հազար ու մէկ զբաղմունքներուն

մեջ ինծի ալ մտածեցիք, ինծի ալ լսեցիք: Եկէք եւ մտէք երկնքի արքայութեան մեջ, ձեր իսկական տունը...»:

Աստուծոյ այս խօսքը լսելը կարծեմ, մեզի համար պիտի ըլլայ մեր կեանքին լաւագոյն գովեստը, ուղղուած լաւագոյն Անծի մը կողմէ, որ մեր Աստուածն է:

Թող պայծառակերպեալ Յիսուս Քրիստոսի շողարձակումը իմաստաւորէ, լուսաւորէ եւ պայծառացնէ մեր միտքերն ու հոգիները եւ բանայ մեր ականջները, որպէսզի կարենանք լսել գովեստը երկնային. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

**Քրիստոս Աստուած Մեր, Փրկիչ եւ լոյս աշխարհի,
որ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քարոզչութեան
միջոցաւ**

**հազար եօթ հարիւր տարի առաջ քու
կենսարար լուսովդ լուսաւորեցիր Հայ
Ժողովուրդը:**

**Քու բարեար, սրբարար եւ բժշկարար լուսովդ
լուսաւորէ նաեւ զիս, ընտանիքս եւ
հարազատներս:**

**Տուր ինծի հաւատք եւ ոյժ, որպէսզի անձս այսօր`
առաւել եւս քան երբեք` քեզի ընծայեմ, եւ դարձուր զիս քու
ընտրեալ անօթիդ` մեր սուրբ եկեղեցւոյ` արժանի ծառան:
Ներէ իմ յանցանքներս եւ օգնէ ինծի, որպէսզի քու սիրոյդ արժանի
Քրիստոնեական վարքով ապրիմ:**

**Օրհնէ Հայաստանեայց Եկեղեցին` իր առաջնորդներով եւ
հաւատացեալներով. Անոր միջոցաւ թող շողայ քու փրկութեան
լոյսը, բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին եւ
Ս. Գրիգոր Լուսաւորչին:**

Փառք քեզ Տէր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամէն:



ՏՕՆԵՐ

Շաբաթ, 28 Յուլիս 2018

Ս. Աթանաս եւ Ս. Կիլրեղ

Հայրապետներու Յիշատակութեան Օր

Ս. Աթանաս եւ Ս. Կիլրեղ հայրապետները Ընդհանրական Եկեղեցւոյ ամենակարկառուն գործիչներէն են, որոնք իրենց ողջ կեանքը ապրեցան յանուն Քրիստոնէական հաւատքի ուղղափառութեան հաստատման ու տարածման՝ ընդդէմ մոլար ըմբռնումներու եւ ուսմունքներու: Ս. Աթանաս հայրապետը (295-373 թթ.) ծնած է Ալեքսանդրիայ, Յոյն Քրիստոնէայ ընտանիքի մէջ: Բարձրագոյն կրթութիւն ստացած է հայրենի քաղաքի հռչակաւոր աստուածաբանական ճեմարանին մէջ: Սարկաւագ ձեռնադրուելով տեղի պատրիարք Ալեքսանդր Ալեքսանդրացիի կողմէ, իբրեւ անոր անձնական քարտուղար՝ մասնակցած է Նիկիոյ 325 թուականի տիեզերաժողովին եւ լուրջ հակահարուած հասցուցած Արիոսին ու անոր հետեւորդներուն, որոնք կը մերժէին Քրիստոսի աստուածային բնութիւնը՝ Անոր յամարելով արարած: Ի հակադրութիւն այս սխալ վարդապետութեան՝ Աթանասը կը հաստատէ Քրիստոսի Աստուած ըլլալու իրողութիւնը եւ փրկութիւնը կը տեսնէ Աստուծոյ հետ մարդկային բնութեան միաւորման մէջ, ինչ որ հնարաւոր է միայն Աստուծոյ մարդացմամբ: Փրկութիւնը, ըստ Աթանասի բանաձեւման, ոչ իսկ ուրիշ բան է, եթէ ոչ աստուածացում. «Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը աստուածանայ»: Աստուածացումը Աստուծոյ որդեգրումն է, «որպէսզի մարդոց որդիները դառնան Աստուծոյ որդիներ»: 328 թուականին բարձրանալով պատրիարքական գահին, Ս. Աթանասը հետագայ իր ողջ կեանքի ընթացքին անդադար կը պայքարի արիոսական հերձուածի դէմ, կը պաշտպանէ Նիկիական ուղղափառ դաւանանքը: Ենթարկուելով հալածանքներու՝ իր եպիսկոպոսական 47 տարիներէն 15-ը կ'անցնէ արքայի մէջ: Սակայն ճշմարտութեան հաստատման իր գերմարդկային ջանքերը կու տան բարի պտուղներ. Աթանասի մահէն 7-8 տարիներ յետոյ՝ Կ. Պոլսոյ 381 թուականի տիեզերաժողովին, վերջնականապէս կ'ամրագրուի Աթանասի վարդապետութիւնը: Մեծ է Աթանասի վաստակը նաեւ վանականութեան զարգացման գործին մէջ: Ս. Կիլրեղ Ալեքսանդրացի հայրապետը Ալեքսանդրիոյ աստուածաբանական դպրոցի փայլուն ներկայացուցիչներէն մէկն է: Ծնած է 380 թուականին,




Թեոփիլոս պատրիարքի եղբորորդին է, որուն յաջորդած է 412 թուականին: Կ. Պոլսոյ պատրիարք Նեստորի դէմ պայքարած է ուղղափառ դաւանանքի համար, որուն պատճառով ալ Թեոդորոս Բ կայսրը 431 թուականին Եփեսոսի մէջ հրաւիրած է երրորդ տիեզերական ժողովը: Ժողովի ընթացքին Նեստորի ուսմունքը դատապարտուած է, իսկ Մարիամի համար ընդունուած է «Աստուածածին» անուանումը: Կիւրեղի նշանաւոր բանաձեւը՝ «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ», դարձած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ՝ Քրիստոսի բնութեան վարդապետութեան հիմնաքարը:

Շաբաթ, 28 Յուլիս 2018

Ս. Գրիգոր Աստուածաբանի Յիշատակութեան Օր

Ս. Գրիգոր Աստուածաբանը կամ Նազիանզացի ծնած է 328 թուականին Կապադովկիայի Նազիանզ գիւղաքաղաքին մօտ գտնուող Արիանզ գիւղը Գրիգոր եպիսկոպոսի ընտանիքին մէջ: Ան կրթութիւն ստացած է Կեսարիոյ մէջ, այնուհետեւ՝ Աթէնքի, ուր ծանօթացած է Քրիստոնէութեան մէկ այլ ապագայ խոշոր դէմքերէն մէկուն՝ Ս. Բարսեղ Կեսարացիին հետ: Որոշ ժամանակ ճգնողական կեանքով ապրելէ յետոյ Գրիգորը կը վերադառնայ Նազիանզ, հօր կողմէ քահանայ կը ձեռնադրուի, այնուհետեւ կը դառնայ Սասիմայի եպիսկոպոս: Ս. Գրիգոր Աստուածաբանը Ս. Բարսեղ Կեսարացիին հետ յամառ պայքար կը մղէ արիոսականներուն դէմ, կը մասնակցին նաեւ Կ. Պոլսոյ Բ տիեզերաժողովին: Ան վախճանած է 389 թուականի Յունուար 25-ին: Գրիգոր Նազիանզացի թողած է հարուստ գրական ժառանգութիւն, որ թարգմանուած է Հայերէն 5-8 դարերուն: Հայերէն թարգմանութեան մէկ մաս մը ամենայն հաւանականութեամբ կատարած է Մովսէս Խորենացիին: Ս. Գրիգոր Նազիանզացի քրիստոնէութեան մեծագոյն դէմքերէն մէկն է, ան արիոսականներուն դէմ իր պայքարով նպաստած է Քրիստոնէութեան անաղարտ պահպանման եւ իր հարուստ գրուածքներով մեծապէս ազդած է Քրիստոնէական աստուածաբանական մտքի ձեւաւորման վրայ:



Holidays

Saturday - July 28, 2018

Commemoration of Patriarchs St. Athanasius and St. Cyril of Alexandria

Patriarchs St. Athanasius and St. Cyril are among the most prominent figures of the Universal Church, who devoted their lives to the promulgation of the orthodoxy of Christianity, and the struggle against false conceptions and erroneous teachings. St. Athanasius (295-373 A.D.) was born in Alexandria, to a Greek Christian family. He received his higher education in the famous Theological School of Alexandria. He was ordained to the diaconate by Patriarch Alexander of Alexandria, and participated in the Ecumenical Council of Nicea in 325, as the Patriarch's personal secretary. During the council he decisively defeated Arius and his followers who denied the Divine nature of Christ and purported that He was a created being. In his argument St. Athanasius stated the reality of Christ being God and explained the salvation in combining the human nature of Jesus with God, which is possible only through His incarnation. According to the formulation of St. Athanasius, salvation is nothing else but theosis – being adopted by God. Athanasius stated that God became incarnate, “so that sons of mortal men should become sons of God.”

In 328, St. Athanasius became Bishop of Alexandria. He continued to struggle against Arianism and forcefully defended the Nicene Orthodox teaching. Having been subjected to repeated persecutions, he spent 15 of his 47-year episcopal service in exile. His heroic efforts bore fruit, and eight years following his death his teachings were adopted by the Ecumenical Council of Constantinople, in 381. St. Athanasius made very significant contributions to the development of monastic life as well.

Patriarch St. Cyril of Alexandria is one of the brilliant representatives of the Alexandrian Theological School. He was born in 380, and was the nephew of Patriarch Theophilus, whom he succeeded in 412. He struggled against Nestorius, the Patriarch of Constantinople, for the preservation of orthodox teaching. It was for this purpose that Emperor Theodoros II convened the Third Ecumenical Council in Ephesus, in 431. During the Council, Nestorius and his teachings were criticized and condemned, and the formulation of “Theotokos” (Birthgiver to God) was adopted by the Church as it related to St. Mary. The famous formulation of St. Cyril: “The one incarnate nature of God the Word”, has become the cornerstone of the Armenian Church regarding the nature of Christ.




Saturday - July 28, 2018

Commemoration of St. Gregory the Theologian

St. Gregory the Theologian has left rich literary heritage, which was translated into Armenian in the 5-8th centuries AD. In all probability St. Moses of Khoronk has made a part of translations into Armenian. St. Gregory the Theologian is one of the most prominent figures of Christianity, who by means of the struggle against Arians has kept Christianity uncorrupted and by means of his works he has greatly influenced the formulation of the Christian theologian ideology.

St. Gregory the Theologian was born in 328 AD in the village Ariangue near the town Naziangue, of Cappadocia. He was the son of the Bishop Gregory. Gregory studied in Caesaria, and then in Athens. In Athens Gregory became acquainted with St. Barsegh of Ceasaria - one of the prominent figures of Christianity in the future. After leading ascetic life for a while, Gregory returned to Naziangue, where he was ordained as a priest by his father. Later he became the Bishop of Sasima. Together with St. Barsegh of Ceasaria St. Gregory the theologian struggled against the Arians. He participated in the 2nd Ecumenical Council of Constantinople. St. Gregory passed away on January 25, 389 AD.





Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներու

Վերափոխումն Ս. Աստուածածնի –

Խաղողօրհնէք – Կիրակի, 12 Օգոստոս 2018

Խաչվերաց – Կիրակի, 16 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պագար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ 28, 2018

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 48-րդ Տարեդարձ –

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Assumption of the Holy Mother of God -

Sunday, August 12th, 2018

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 16th, 2018

Annual Bazaar – Saturday & Sunday -

October 27 & 28, 2018

Children's Christmas /CFFA –

Sunday, December 2nd, 2018

Church 48th Anniversary –

Sunday, December 9th, 2018



Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն



Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի

կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ճիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,


If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Parish Council

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 29 Յուլիս 2018



Առաջնորդ Սրբազան Հոր թելադրանքով եւ խնդրանքով
Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին,
Ծխական Խորհուրդին եւ Յարակից բոլոր Մարմիններուն,
Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Յունաստանի մէջ զանգուածային հրդեհներու
զոհ դարձած նահատակներու
հոգիներուն ի հանգիստ:



Պրն. Արթօ Մանուկեանի եւ զաւակներուն՝ Արէնի եւ Լօռիի,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ եւ մօր՝

ԱՆԻ

ԳԱԼԵՄՃԵԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(ANNIE KALEMJIAN MANOUKIAN)

Մահուան 40-ին առիթով

(Յաւարտ Յոգեհանգստեան պաշտօնին հոգեճաշի սպասարկութիւն մատուցուած՝ Թեքեան Մշակութային Միութեան կողմէ, տեղի պիտի ունենայ Թեքեան Մշակութային Կեդրոնին մէջ):



Պրն. Պօղոս Աճեմեանի,
Տ. եւ Տիկ. Ուիլեղմ եւ Ալին Պաշաքի,
Տ. եւ Տիկ. Ալէն եւ Գաշա Աճեմեանի եւ զաւակներուն՝
Վիքթօրեայի եւ Ռօպերի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝

ԹԱԳՈՒՅԻ ԱՃԵՄԵԱՆԻ
(TAKOUSHIE AJEMIAN)

Մահուան 40-ին առիթով





Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ

2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Ձեռնարկ
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխումն Ս. Աստուածածնի» Խաղողօրհնէք Աւարտին Ճաշկերոյթ Եկեղեցւոյ շրջափակին մէջ
	13, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
Սեպտեմբեր	16, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	17, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Հոգեհանգստեան Պաշտօն
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ

	9, Կիրակի	Եկեղեցւոյ Քման եւ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Գրաւուած Օր

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի
Հիմնադրութեան 60 Ամեակի
Հանդիսութիւն**

10 Նոյեմբեր 2018, Շաբաթ երեկոյեան

Կը խնդրուի չխաչաձեւել:

Մանրամասնութիւնները յաջորդիւ:

**Շնորհակալութիւն
Ծխական Խորհուրդ**



Յայտարարուժիլ

Միքելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծխական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծխական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծխական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝
Ծխական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ



Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).



Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.

Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.

Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège

Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.

La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):



Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուն:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորաները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիական Խորհուրդ



SOL



**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

F ÉTE MAJEUR A L'ASSOMPTION DE LA SAINTE VIERGE

ՏԱՂԱԲԱՐ ՏՕՆԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ / FÉTE MAJEUR

Կիրակի, 12 Օգոստոս 2018

Dimanche, 12 août 2018

Առաւօտեան ժամերգութիւն	09:30	Matines à	09:30
Սուրբ Պատարագ	10:30	Sainte Messe	10:30
Օրհնութիւն Խաղողոյ	12 – 12:30	Bénédictio du raisin	12 -12 :30

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ՀԱՅ ԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ

Célébrant: REV. PÉRE HAY ARI TANASHIAN

**Մ. Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ
«Կոմիտաս» Դպրաց Դասը:**

- **Յաւարտ Ա. Պատարագի
նախաձեռնութեամբ՝ Ծխական
Խորհուրդի Խորովածի
Սպասարկութիւն ԵՆ**
- **«Անուշեղէնի Վաճառք»
կազմակերպութեամբ՝ Տիկնանց
Յանձնախումբի Եկեղեցւոյ
պարտեզին մէջ:**



- A l'issue de la Bénédiction du raisin, le service de B.B.Q, organisé par le Conseil Paroissial
- Ventes de pâtisserie, par des dames de l'église.

Մուտքի Ծուխ՝ \$20 / Entrée \$20

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ**



**Տ. ԴԱԿԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

**BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS**

BY FR. DAVID MARGARYAN

**Տեղի պիտի ունենան սկսեալ Սեպտեմբեր 2018-Էն,
Հինգշաբթի՝ Երեկոները ժամը 7-ին
Եկեղեցւոյ մէջ**



**They will be held starting in
September 2018, every Thursday
at 7:00 pm at the Church**



**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու
Տ. Դակիթ Քինյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած Աստուածաշնչական Նիւթերու
ճոխ գիտելիքներուն:**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

**We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be
served during the sessions.**



**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:**

Cordially we expect everyone's presence.



**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal